## ՃԵ.

Սուրբ Թէոդորոսի գլուխն և այլ մասունք ըստամպօլի ուղղափառաց փափն[1] չնորհեաց իւրեանց[2] [ոմանց հայ միսիոնարաց] որ տանեն։ (Յովհ. պատկերահան, յամիսն 1745 սեպտ. 11. [Հռոմ])։

## ՃԶ.

Մեր կարտինալ Քարաֆային կողմանէ Վրդանէս եպիսկոպոսն և ես խօսեցաք Սարքիս եպիսկոպոսին, թէ մնացէ տեղս իբրև ձեռնադրող եպիսկոպոս և մեծաւոր. յանձն չառաւ ասելով թէ անհնարին է մնալն իմ տեղս, հարկ է ինձ վենետիկ դառնալ, զի անդ գիրք պիտի տպել տամ ի յոգուստս յազգին մերոյ և այլն. իրաւի այսչափ եպիսկոպոսք եկին տեղս. սորա նման գրոց հմուտ և կարդացող ոչ ոք տեսի. փափն և ոմանք կարտինալք որոց մոտն գնաց յոյժ սէր և ընդունելութիւնս արարին իւրեան։ (Յովհ. պատկերահան առ Մխիթար, յամիսն 1745 դեկտ. 18. [Հռոմ])։

## ՃԷ.

Լուաք թէ շահ Թահմազն, որ զէջմիածին մերկացուցեալ և զկաթուղիկոսն[3] կապանօք ընդ իւր տարեալ, յայժմ դարձուցեալ է ի յաթոռ իւր. աստ զգիր օրհնութեան ուղարկեալ, գնուիրակութեան տալիքն խնդրեալ, փողէ թափթփեցան. 30. 40 քսակ ճէրիմէ տուանք, պարտուց մէջ ենք։ (Հ. Միք. վրդ. առ Մխ., յամիսն 1746 Յունվ. 4. [Պոլիս])։

## ՃԸ.

Ի վերափոխման պահուց չաբտուն, մի վարդապետ հայոց տաճկացաւ։ Յետ ոմանց աւուրց զղջացաւ զձևն փոխեալ, ըմպոնեցին և գլխատեցին. ասեն թէ փաթրիքն լեալ իցէ առիթ այսմ. վասն որոյ հակառակորդաց նախատակոծ եղև։ Այս վարդապետս էր պալաթցի ներսէս վարդապետին պուռսայու առաջնորդին աշակերտ։ Սա գոլով աստ, միշտ զհաց մի, այսինքն զպաշտօն մի կամ զառաջնորդութիւն յուրեք, կամ գնուիրակութիւն, գկօնտակ մի խնդրեալ, որով որպէս ժողովարար շրջիցի, չէ տուեալ խստութեամբ և սաստիւ վարեալ և արտաքսեալ. և նա ի բարկութենէն գնացեալ զայն ուրացութիւնն արարեալ։ Եւ ոմանք ասեն թէ խաբանօք ըստ առաջնորդի տեղւոյ միոյ իբրև աթոռակալ և փոխանորդ ուղարկեալ, որ իբրև գնայցէ անդ իբրև սիւրկիւն արգելեալ լիցի։ Եւ զայս դաւաճանութիւնս լուեալ ոմն ի բարեկամաց այս վարդապետիս մինչ մտանելոց էր ի նաւ և գնալոց, ծանուցեալ է թէ ուր գնաս, վասն քոյ այս բան գոյ։ Ասեն վասն այսր բարկացեալ գնացեալ տաճկացեալ է։ Տաճիկք բազմաց հայոց ասէին. ահա ձեր դարապաշն ճանաչելով զմերն գոլ ճշմարիտ, ինքնայօժար եկն ի հաւատ։ Բայց դառնալովն և մեռանելովն եբարց զայս նախատինք։ (Հ. Միք. վրդպտ. առ Մխիթար, յամիսն 1746 հոկտ. 10. [Պոլիս])։

---

1. Բենեդ. ԺԴ.։
2. Այսինքն Հայ միսիոնարներէ ոմանց։
3. Ղազար։